ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԺՈՒԼՎԵՐՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻԲ 00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ–2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սահակյան Արմեն Կոլյայի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Զասլավսկայա Մարիա Իգորի

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Յարմալոյան Մարինե Սամվելի

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական մանկավարժական համալասարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2024 թ. նոյեմբերի 18–ին, ժամը 16:00–ին Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ ԲՈԿ–ի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թվականի հոկտեմբերի 10–ին:

Մասնագիտական խորհրդի Գիտքարտուղար Փիլ. գիտ. թեկնածու Ե.Մանուկյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանում կրթական ոլորտի խնդիրների շարքում առաջնային տեղ են գրավում բուհ-աշխատաշուկա կապի և մասնագիտական կողմնորոշման խնդիրները: Զբաղվածության ոլորտը երկրի սոցիալ-տնտեսական կյանքի կարևորագույն օղակներից մեկն է, որն իր գործունեությամբ ազդում է մյուս սոցիալական ինստիտուտների բնականոն զարգացման վրա: Այս հանգամանքով է պայմանավորված պետության առաջընթացը, որով էլ բացատրվում է պետության կողմից զբաղվածության ոլորտի կառավարման և առկա խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը: Այդ խնդիրների լուծմամբ կարելի է ուժեղացնել հասարակության սոցիալական դիմադրողականությունը, որն արագ փոփոխվող աշխարհում յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության նշանակության խնդիր է: Չնայած տնտեսական ոլորտում որոշակի դրական փոփոխություններին՝ աշխատաշուկայի խնդիրների շարքում շարունակում է արդիական մնալ առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խնդիրը, որի պատճառը ոչ միայն աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև ոչ արդյունավետ համագործակցությունն է, այլև հասարակականի նկատմամբ անհատական շահի գերակայման ընկալումը: Այսօր Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակական և քանակական ակնհայտ անհավասարակշռություն, որն արտահայտվում է գործազրկության բարձր մակարդակով: ՀՀ մասնագիտական կրթական համակարգը որոշ մասնագիտությունների գծով տալիս է կադրերի գերարտադրություն, իսկ որոշների դեպքում՝ պահանջարկ ունեցող մասնագետների պակասորդ: Այդ ամենը, անշուշտ, ուղղակի ազդեցություն է ունենում ոչ միայն արդեն իսկ որակավորում ստացած մասնագետների, այլև ուսանողների՝ որպես զբաղված, սակայն ֆինանսապես խոցելի հանրույթի վրա:

Խնդրի առնչությամբ կարող ենք նշել, որ ուսումը և աշխատանքը համատեղել ցանկացող ուսանողների թիվը Հայաստանում նախկինի համեմատ զգալիորեն աճել է: Նկատելի է նաև, որ ուսմանը և աշխատանքին տրամադրվող ժամաքանակի հարաբերակցությունը ևս փոխվել է՝ հօգուտ աշխատանքային զբաղվածության: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ուսումնական տարվա ընթացքում միջնակարգ զբաղվածության

մեծ ծավալներին, երբ հիմնական գործունեության՝ կրթություն ստանալու հետ մեկտեղ ուսանողները տարբեր տեսակի աշխատանքներ են կատարում վարձատրության դիմաց:

Այսօր աշխարհի շատ երկրներում աշխատաշուկան ուսանողների համար ստեղծել է նպաստավոր պայմաններ ուսման և աշխատանքի համատեղման նպատակով. փոխվել է աշխատատեղերի կառուցվածքը, զարգացում են ապրել զբաղվածության՝ ոչ ավանդական ձևերը (մասնակի զբաղվածություն, ճկուն գրաֆիկով աշխատանք, հեռավար աշխատանք և այլն), ի հայտ են եկել նորերը, որոնցով կարելի է զբաղվել ուսման և աշխատանքի համատեղման պայմաններում:

Գործատուների մեծ մասի կողմից ներկայացվող աշխատանքային պահանջների մեջ առաջնային տեղ է գրավում ապագա աշխատակցի աշխատանքային փորձը: Ուստի, պատահական չէ, որ ուսումն ու աշխատանքը համատեղել ցանկացող ուսանողների թվի ավելացումը զգալիորեն պայմանավորված է նաև այս հանգամանքով: Ընդ որում, պետք է ասել, որ աշխատող ուսանողները մյուսների համեմատությամբ ունեն մի շարք առավելություններ՝ ճկուն են, սթրեսակայուն, արագ են կողմնորոշում, որոշումների ընդունման մեջ ավելի հաստատակամ են, արագ են հարմարվում նոր միջավայրին, նախաձեռնող են, ակտիվ և այլն: Հասկանալի է, որ նրանց՝ այս կարողությունները ձևավորվում և զարգանում են աշխատանքային զբաղվածության արդյունքում:

Հարկ է նկատել նաև, որ ուսման հետ համատեղ աշխատելու՝ ուսանողների ձգտումը պայմանավորված չէ միայն գործատուների կողմից ներկայացվող աշխատանքային փորձի պահանջով. առկա են նաև այլ կարևոր գործոններ, որոնք փորձել ենք բացահայտել սույն ատենախոսության շրջանակներում:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Նպատակը Հայաստանի Հանրապետության երիտասարդների՝ ի դեմս մարզային ուսանողների զբաղվածության հիմնախնդիրների բացահայտումն է:

Ուշադրության կենտրոնում են եղել, մասնավորապես, հետևյալ խնդիրները.

- վերհանել ուսանող երիտասարդների զբաղվածության և աշխատանքի տեղավորման խնդիրները,
- բացահայտել ուսանողների՝ որպես առանձին ենթամշակույթի, սոցիալական խմբի առանձնահատկությունները,

- բացահայտել բուհ-ուսանող-գործատու կապի արդյունավետ կիրառման խոչընդոտները, բացթողումները և հեռանկարները,
- բացահայտել պետության դերակատարությունն ուսանողների զբաղվածության կարգավորման գործում,
- վերհանել ուսանողների կրթական գործընթացի՝ արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող հարցերը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության առարկան ՀՀ մարզերի ուսանող երիտասարդների՝ որպես առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբի և առանձին ենթամշակույթ կրող հանրույթի զբաղվածության՝ ըստ մասնագիտության աշխատանքի տեղավորվելու հիմնախնդիրն է:

Հետազոտության օբյեկտը ՀՀ մարզային ուսանողներն են՝ ի դեմս ԳՊՀ ուսանողների:

Հետազոտության վարկածները

1. ՀՀ մարզերի ուսանողների մասնագիտական կոմպետենտության բովանդակությունը կազմող այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են մասնագիտական հասունությունը և բանիմացությունը, մասնագիտական գործունեության որակը, մասնագիտական զարգացման որոշակի աստիճանը, որը ենթադրում է համապիտանի (ունիվերսալ) մասնագիտական հմտությունների, կարողությունների, ունակությունների, գիտելիքների ու զարգացած, համապատասխան անձնային ու մասնագիտական որակների և գործնական փորձառության ամբողջություն, կարող են ձևավորվել և զարգանալ միայն աշխատանքային մասնագիտական գործունեության ընթացքում:

2. Բուհ-ուսանող-աշխատաշուկա հարաբերություններում մասնագիտական կողմնորոշման բաղադրիչների համընդգրկուն կիրառումը բուհերում նպաստում է հաջողությամբ աշխատաշուկա մուտք գործելուն:

3. Մասնագիտական կողմնորոշման ընթացքում անձի ոչ միայն անհատական հատկանիշները, այլ նաև նրա վրա իր ընտանիքի ազդեցության չափը վճռորոշ դեր են խաղում:

Թեմայի տեսական հիմքերը և ուսումնասիրվածության աստիճանը:

Չնայած վերջին տասնամյակում ուսանողների զբաղվածության վերաբերյալ Հայաստանում արվել են մի շարք ուսումնասիրություններ: 2013 թվականին Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրերի աջակցությամբ հիմնադրված «Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը» թեպետ պարբերաբար ուսումնասիրել է երիտասարդների հիմնախնդիրները և պատրաստել մի շարք զեկույցներ, սակայն գրեթե հնարավոր չի եղել այդ առաջարկությունները կյանքի կոչել:

Ներկա հետազոտության ընթացքում որոշակիորեն հենվել ենք հետևյալ ուսումնասիրությունների վրա, թեպետ, ինչպես արդեն նշվեց, դրանք սպառիչ չեն այստեղ քննարկվող հիմնախնդրի լուծման տեսանկյունից: Խոսքը, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում» (2016 թ.), «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն» (2015թ.), «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները» (2014թ.), «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» (2014 թ.), «Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» (2013 թ.) ուսումնասիրությունների մասին է:

Վիճակագրական և աղբյուրագիտական տեսանկյունից արժեքավոր են «Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծություն զեկույց» (2015-2016 թթ.), «Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Երիտասարդական աշատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ. երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն» (2015 թ.) աշխատանքները:

Ուսումնասիրության առարկա են հանդիսացել Արթուր Մկրտիչյանի, Հարություն Վերմիշյանի, Սոնա Բալասանյանի «Անկախության սերունդ. հետազոտություն երիտասարդների շրջանում», Սամվել Մանուկյանի «Հայաստանի երիտասարդությունը և հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի զարգացումը», Յուրի Սուվարյանի «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը»« «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը», Կ.

Ստեփանյանի «Աշխատանքի շուկան՝ որպես ՀՀ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն գործոն» աշխատությունները և այլն:

Հետազոտության հիմնախնդրի առանձին կողմերին անդրադարձել են արևմտյան մի շարք հեղինակեր՝ Էմանուել Վալերսթայնը, Մ.Կաստելսը, Դանիել Բելը, Էմիլ Դյուրկհեյմը, Անդրեաս Պոլտերմանը, Ալեն Տուրենը, Էնթոնի Գիդենսը, Հերբերտ Սպենսերը, Թալքոթ Պարսոնսը և ուրիշներ: Այդ առնչությամբ հիշատակության արժանի են Յուլիա Չիտաևայի, Յուրի Վոլկովի, Գալինա Չերեդնիչենկոյի, Լև Շաբանովի, Վլադիմիր Լիսովսկու և այլոց աշխատությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության մեթոդների շարքում պետք է նշենք սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և փիլիսոփայական գրականության վերլուծությունը, համադրումն ու համեմատությունը: Կիրառվել են նաև սոցիոլոգիական քանակական հարցման և խորին հարցազրույցների մեթոդները: Արդյունքները ենթարկվել են վիճակագրական մշակման ու վերլուծության:

Գիտական նորույթը

1. Աշխատանքում բացահայտվել են բուհից աշխատաշուկա բարձրորակ մասնագետների անցումն ապահովող և կրթության որակի վրա դրական ազդեցություն ունեցող զբաղվածության արդյունավետ մոդելներ, և հանրագումարում առաջարկվել է նորը՝ փորձելով տեղայնացնել ՀՀ–ում: Հայաստանում ուսանողների զբաղվածության ապահովման առաջարկվող մոդելը ներառում է հետևյալ հիմնական սուբյեկտներին՝ ուսանողներ, գործատուներ, բուհեր, զբաղվածության կարգավորման պետական մարմիններ: Որպես հասարակության մեջ կոմպետենտ մասնագետների բանակ ձևավորող և կապող օղակներ վերլուծվել են բուհերը, մասնագիտական կողմնորոշման կենտրոնները և այն: Յուրահատուկ սոցիալական գործընկերությունը մոդելավորվել է գործատուների, մասնագետների խորհուրդների և դասախոսական համակազմի հանրապետական ցանցի ձևով: Նշված ցանցը բոլորի համատեղ ջանքերով կարող է կազմակերպել ու կառավարել կրթական գործընթացը, ձևավորել ուսանողների, շրջանավարտների մասնագիտական ու կառավարչական հմտությունները: Սույն մոդելն առավել արդյունավետ է և գործառութային նշանակությամբ նորույթ է Հայաստանի աշխատաշուկայի առումով: Այն նախատեսում է

ապագա մասնագետների զբաղվածության խնդրի կարգավորման մեջ պետության և մասնավոր հատվածի առանձնակի դերակատարությունը:

2. Ներկա հետազոտությամբ առաջին անգամ ընդհանրացվել և համակարգված ձևով են ներկայացվել մարզային ուսանողների խնդիրները՝ կապված ինչպես անցած տասնամյակներում, այնպես էլ ներկայիս զբաղվածության ու գործազրկության հետ: Աշխատանքում ուսումնասիրվել են ուսանողների զբաղվածության վրա ազդող գործոնները և հստակ վերլուծվել են այդ գործոններով պայմանավորված աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու խնդիրները: Կարևորելով բուհ–աշխատաշուկա կապը՝ համակարգված ձևով ուսումնասիրվել են առկա բացթողումները, ներկայացնելով ժամանակակից աշխարհում արդեն կիրառվող մեթոդների համադրությամբ խնդիրների լուծումներ: Վերլուծությունների արդյունքում առաջարկել ենք, որ այդ կապը այսօր թույլ է և խիստ անհրաժեշտ է այստեղ կարևորել պետության, գործատուների, հանրակրթական դպրոցների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների մասնակցությունը: Առաջարկվել է ցանցային հասարակության զարգացմանը զուգընթաց ստեղծել արդյունավետ համագործակցության կլաստերներ, որտեղ յուրաքանչյուր ուսանող կունենա հավասար պայմաններ արագ ստանալու աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ տեղեկույթը՝ հետևաբար կստեղծվի մրցակցային դաշտ՝ հավասար պայմաններով: Դա կարելի է իրականացնել ուսանողների զբաղվածության առաջարկված մոդելի կիրառությամբ:

3. Արտերկրյա առաջավոր փորձի ուսումնասիրության և մեր կողմից կատարված հետազոտությունների հիման վրա առաջարկվել է ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության աստիճանի բարձրացման նոր միջոցառումների իրականացման նախագիծ, որը ներկայացվում է ընդհանուր աշխատանքի վերջնարդյունքում: Քանի որ աշխատաշուկա մուտքի առումով կարևոր է աշխատանքային փորձի առկայությունը, ՀՀ-ում արդյունավետ կլինի պետական ու ոչ պետական ձեռնարկություններում ուսանողների փորձառության միջազգային պրակտիկայի ներդրումն ու կիրառումը՝ աշխատանքային փորձառություն ստանալու ակտիվ քաղաքականության իրականացումն ու դրան միտված ծրագրերի իրագործումը: Ուսանողների մասնագիտական կոմպետենտության բովանդակությունը կազմող կարևորագույն այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են մասնագիտական հասունությունը և բանիմացությունը, մասնագիտական գործունեության որակը, մասնագիտական զարգացման որոշակի աստիճանը, որը ենթադրում է համապիտանի

(ունիվերսալ) մասնագիտական հմտությունների, կարողությունների, ունակությունների, գիտելիքների ու զարգացած համապատասխան անձնային ու մասնագիտական որակների և գործնական փորձառության ամբողջություն, կարող են ձևավորվել և զարգանալ միայն աշխատանքային գործունեության ընթացքում: Ընդգծենք, որ աշխատանքում ներկայացվել է մասնագիտական կոմպետենտություն–մասնագիտական կայացում –արդիականացում կապի վերլուծությունը:

4. Ուսումնասիրվել են կոնկրետ մասնագիտության կողմնորոշման և մասնագիտությամբ աշխատանք գտնելու ուղիղ համեմատական կապերը: Բացահայտվել են այնպիսի ասպեկտներ, երբ ծնողները բացասական ազդեցություն են ունենում երեխաների մասնագիտական կողմորոշման վրա, և հաշվի չառնելով սեփական երեխաների սոցիալ–հոգեբանական առանձնահատկությունները, նրանց ուղղորդում են մի այնպիսի մասնագիտության, որը չի համապատասխանում երեխայի ձգտումներին և իրականությանը: Կարող ենք փաստել որ մասնագիտական սխալ կողմնորոշման հիմքերը հաճախ դրվում են ընտանիքում: Տվյալ դեպքում որոշակի անհամապատասխանություն է առաջանում մասնագիտության պահանջների և սովորողի իրական ունակությունների միջև: Դա նշանակում է, որ մասնագիտական կողմնորոշումը, առաջին հերթին, հանդես է գալիս որպես անձի անհատական հնարավորություններով պայմանավորված ընտրություն:

5. Նորովի է ներկայացվել երիտասարդների՝ մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունը՝ կարևորելով աշխատանքային տեղի ու դերի ընտրության, մասնագիտական բազմազանության և աճի ապահովման գործընթացը: Ընդգծվել է անձի հաղորդակցման, ձեռներեցության, շուկայամետ գործելաոճի և այլ հմտությունների զարգացման անհրաժեշտությունը՝ ուղղակի և անուղղակի կերպով վկայակոչելով մի շարք երկրների հաջողված փորձը: Կրթության ոլորտի և աշխատաշուկայի փոխհարաբերությունների խնդիրը դիտարկվել է ռազմավարական «հարմարեցման» և նոր տեսակի աշխատողների որակներին համապատասխան աշխատաշուկայի փոխակերպման տեսանկյունից, երբ մարդկանց վերապատրաստումը պետք է իրականացվի մասնագիտական կրթության համակարգի միջոցով:

6. Սույն աշխատության սահմաններում անդրադարձ է կատարվել «տնտեսական նպատակահարմարություն» հասկացությանը: Աշխատանքում որպես նորույթ ենք ներկայացնում տվյալ եզրույթի վերլուծությունը: Տնտեսապես նպատակահարմար

աշխատատեղերը և աշխատաշուկան դինամիկ զարգացող տնտեսության առանցքային տարրերից են: Տնտեսապես նպատակահարմար կամ արդյունավետ աշխատաշուկան, սովորաբար, ի վիճակի է արձագանքելու երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող փոփոխություններին, որը պայմանավորված է գերազանցապես երկու նախադրյալով. դրանցից մեկն աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմերն են, իսկ մյուսը պրակտիկայում օրենսդրորեն արդեն իսկ ամրագրված դրույթների կիրառությունը:

7. Աշխատանքում նորովի են ուսումնասիրվել և համակարգված ձևով ներկայացվել են տեղեկատվական դարաշրջանի մարտահրավերները: Արագ տեխնոլոգիական փոփոխությունների հետևանքով առաջանում է աշխատուժի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի անհամապատասխանություն, երբ աշխատանք փնտրող երիտասարդ մասնագետները չեն կարողանում հասցնել համապատասխանել գործատուների՝ արագ փոփոխվող պահանջներին: Ժամանակակից հասարակության՝ աճող գիտելիքների և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում անհրաժեշտ է կրթական համակարգը համապատասխանեցնել տեղեկատավական նորարարություններին, կրթել համապատասխան մասնագետներ, որոնք կօգնեն ուսանողներին քայլել գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց: Տեղեկատվական տեխնոլոգիաների, նորագույն սարքավորումների ու տեղեկատվական ռեսուրսների համակցումը կրթական գործընթացներին մի նոր մշակույթ է:

8. Աշխատանքում բացահայտել և առանձնացվել են մի շարք խոչընդոտներ, որոնք խանգարում են դիպլոմավորված մասնագետներին՝ իրենց տեղը գրավելու աշխատաշուկայում: Խոչընդոտների շարքում առանձնացվել են աշխատաշուկայի և կրթական հաստատությունների փոխադարձ կապն ապահովող կառուցակարգերի բացակայության խնդիրները և կրթական հաստատությունների՝ իրենց շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու խնդիրները: Ինչպես նաև վերհանվել են ընկերությունների կադրային քաղաքականության առաջնահերթությունները, որորնք կողմնորոշված են միայն դեպի ընթացիկ արդյունքները՝ անտեսելով հեռանկարային նպատակները: Առաջարկվել են որոշակի միջոցառումներ խոչընդոտները հաղթահարելու համար:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության տեսական հատվածում ուսումնասիրվել և ներկայացվել են դասական և ժամանակակից տեսություններ, որոնք հիմք են հանդիսացել թեմայի հետազոտության համար: Տեսաբանական մոտեցումների համապարփակ վերլուծության արդյունքները հանդիսանում են տվյալ աշխատանքի տեսաբանական հենքը: Ատենախոսության մեջ տեղ գտած հետազոտությունների արդյունքում ընդհանրացվել և բազմակողմանիորեն ներկայացվել են ուսանողների զբաղվածության, կրթության, մասնագիտական կողմնորոշման և կոմպետենտության դասական և ժամանակակից մոտեցումները: Այստեղ տեղ գտած վերլուծությունները և եզրահանգումները կարող են կիրառվել որպես հիմք՝ որոշակի ուսումնասիրությունների ժամանակ:

Կատարված հետազոտոտության եզրահանգումների հիման վրա ստացված արդյունքները կարելի է կիրառել բուհ–աշխատաշուկա խնդիրները նվազեցնելու հարցում: Վերհանված խնդիրների լուծման միջոցով կարելի է լուծել աշխատաշուկայի և կրթական հաստատությունների փոխադարձ կապն ապահովող կառուցակարգերի բացակայության հարցերը և օգնել բուհերին, որպեսզի համակարգված կերպով կարողանան աշխատանքով ապահովել իրենց շրջանավարտներին: Իհարկե, հաստատապես փաստենք, ցանցային–համակարգված մոդելի ստեղծման անհրաժեշտությունը:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պետք է լինեն: Առաջարկվող լուծումների միջոցով հնարավոր է նվազեցնել սխալ մասնագիատական ընտրություն կայացրած ուսանողների թիվը: Հնարավոր է լուծել այնպիսի կարևոր նշանակության հարցեր, ինչպիսիք, անհատական ունակություններին համարժեք՝ ճիշտ մասնագիտության ընտրությունն է, մասնագիտական փորձի ձեռք բերումն ու կատարելագործումը, աշխատուժի՝ ըստ արժանվույն գնահատանքն ու վարձատրությունը:

Իհարկե առաջարկում ենք ստեղծել նոր, համակարգված, ցանցային մոդել ուսանողների աշխատանքի և զբաղվածության ապահովման համար: Ներկայացվող ուղղությունները կերաշխավորեն ՀՀ աշխատաշուկայի և կրթական համակարգի սոցիալական ու աշխատանքային կայուն փոխգործակցությունը: Այս մոդել–համակարգը կարելի է անվանել սոցիալական գործընկերություն–ցանցային մոդել, որի շուրջ կհամախմբվեն բոլոր կառույցները, որոնք կարող են լուծել ուսանողների զվաղվածության

և աշխատանքի տեղավորման խնդիրները: Մեր կողմից ներկայացվող մոդելի առավելությունը այն է, որ ընդհանուր հարթակում համախմբված բոլոր կառույցները պետք է գործառնեն համաձայնեցված՝ ի շահ կրթական համակարգի կատարելագործման, աշխատատեղերի ստեղծման, ուսանողների մասնագիտական ինքնորոշման, գործատուների մոտ աշխատանքային փորձի անցկցման կազմակերպման, արտալսարանային գրոծնական դասերի կազմակերպման և բուհական համակարգի կատրելագործման: Այս հարթակում անհրաժեշտ է ներառել բոլոր տվյալները (բուհեր,աշխատաշուկա, մասնագիտական նորություններ և գործատուների, դասախոսների հանրապետական բազաներ): Հանրապետական ուսանողա–դասախոսական ցանցի ստեղծման արդյունքում կարող ենք ստեղծել գիտական ցանցային միջավայր, տեղեկանալ և տեղեկացնել արդիական, գիտական նորարարություններին, ծանոթանալ արձանագրված մասնագիտական հաջողություններին և առաջընթացի ռազմավարական մոտեցումներին: Առաջարկվող սոցիալական գործընկերության արդյունքում կարելի է վերացնել բուհ–բուհ, բուհ–գործատու–ուսանող–դասախոս–զբաղվածության պետական համակարգ անջրպետը և իհարկե ստեղծել համակարգ, որտեղ բոլոր շահագրգիռ կողմերը կլինեն դերակատար, տեղեկացված և ներառված:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության առանցքային գաղափարները, դրույթներն ու ընդհանրացումները քննարկվել են ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նիստերում, ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի տեսական սեմինար–քննարկումներում (2018-2024):

Ատենախոսության մեջ ներկայացված նորույթները հրապարակվել են հոդվածների տեսքով՝ համապատասխան գիտական ամսագրերում:

Ատենախոսության մեջ ներկայացված դրույթները ներկայացվել են ՀՀ և ՌԴ գիտաժողովներում:

- Հայոց նորագույն պետականության քառորդ դարը. Գիտաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՀԳԱԱ

- «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» Երրորդ միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության անկախության 100-ամյակին Երևան, ՀՊՄՀ Պատմության եվ իրավագիտության ֆակուլտետ
- «Международное сотрудничество молодых ученых стран Евразийского экономического союза» ФГБУН ВолНЦ РАН, г. Вологда.
- Ежегодная международная научно-практическая интернет-конференция «Глобальные вызовы и региональное развитие в зеркале социологических измерений.
- Тенденции развития практической социологии и психологии. Материалы армянороссийской международной научной конференции, .Ереван,ЕГУ.

Ատենախոսության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երեքական ենթագլուխներից և եզրակացությունից:

Սույն աշխատանքի առաջին՝ «Զբաղվածության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գլուխը ներառում է երեք ենթագլուխ:

Առաջին՝ «Բարձրագույն կրթությունը և աշխատաշուկան Հայաստանում հետխորհրդային իրողությունների պայմաններում»» ենթագլխում ներկայացվել են ՀՀ բարձրագույն կրության ոլորտում և աշխատաշուկայում տեղի ունեցած զարգացումները: Ներկայացվել են Հայաստանի երիտասարդների համար արագ և անսպասելի փոփոխություններն ու բարձրագույն կրթություն ստանալու բարդությունները, որոնք ոչ միայն չթուլացան ժամանակի ընթացքում, այլև ավելի սրվեցին ու որոշակի փոխակերպումների ենթարկվեցին: Այս խնդիրների սրումը պայմանավորված էր հիմնականում կրթական հաստատությունների և աշխատաշուկայի միջև հակասությունների խորացմամբ, ինչպես նաև պետական միջամտությամբ դրանք լուծելու փորձերի ձախողմամբ: Կրթության բնագավառում նոր ձեռնարկումները ուղեկցվեցին ազգային կրթական և գիտահետազոտական հաստատությունների, պետական նոր կառույցների ստեղծմամբ և հների վերակազմակերպմամբ:

Կրթության ոլորտի և աշխատաշուկայի փոխհարաբերությունների խնդիրը դիտարկելու երկրորդ տարբերակը ռազմավարական հարմարեցման և նոր տեսակի

աշխատողների որակներին համապատասխան աշխատաշուկայի փոխակերպման ուղղությունն էր, երբ մարդկանց վերապատրաստումն իրականացվում էր մասնագիտական կրթության համակարգի միջոցով: Այս առումով, պատահական չէ, որ աշխատանքի շուկան տեղափոխվում էր այնտեղ, որտեղ առկա էին ստեղծագործ աշխատողներ:

Ուսումնասիրվել են հետխորհրդային ժամանակաշրջանում ՀՀ զբաղվածության մոդելներում տեղ գտած զարգացումները, ներկայացվել են առանձնահատկություններն ու բացթողումները: Զբաղվածության մակարդակը յուրաքանչյուր երկրի տնտեսության վիճակի՝ հստակ վկայությունն է և արդյունավետության՝ ճշգրիտ գնահատականը: ՀՀ զբաղբաածության ոլորտի կարգավորումը հրամայական է:

«Բուհ–աշխատաշուկա կապի ընդհանուր բնութագիրը Հայաստանում» ենթագլխում ուսումնասիրվել և ներկայացվել են բուհ–աշխատաշուկա կապի դրսևորումները և գործառնման ձևերը: Արտերկրյա և հայաստանյան հետազոտությունների հիման վրա ներկայացվել են այն խնդիրները, որոնք առկա են ոլորտում: Ներկայացվել են ուսանողների աշխատաշուկա մուտքի խնդիրները, որպես երկկողմանի գործընթացի արդյունք: Նշվել են մասնագիտությամբ աշխատանք չգտնելու պատճառները, քննարկվել են գործատուների և պետական համակարգի մոտեցումները հարցի վերաբերյալ: Խնդիրը ներկայացվել է և՛ անհատական, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում: Արդյունքում կնշենք, որ պետք է նպաստավոր պայմաններ ստեղծել և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի շրջանավարտները կարողանան տեղեկանալ աշխատաշուկայի պահանջների մասին և որոշեն, թե որ մասնագիտությունն է արդիական, պահանջված ու հեռանկարային:

Ժամանակակից պայմաններում առաջանում և զարգանում են նոր պահանջներ ու միտումներ՝ կապված աշխատատեղերի կառուցվածքի, բովանդակության հետ: Իբրև այս միտումների ընկալման տեսաբանական հիմք՝ կարելի է դիտարկել Դ. Բելի՝ հետարդյունաբերական հասարակության և Մ. Կաստելսի տեղեկատվական ցանցային հասարակության հայեցակարգերը: Նոր մարտահրավերներին արձագանքել և համապատասխանել ցանկացող գործատուն ձգտում է ապահովել վարձու աշխատանքի մեծ ճկունությունը՝ աշխատանքային գրաֆիկի, աշխատատեղերի հարմարվողականության բարձրացման, աշխատանքային գործողությունների և հմտությունների բազմազանության

ապահովման միջոցով և այլն: Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում կարելի է նկատել կրթական ծառայությունների շուկայի և աշխատաշուկայի միջև հստակ հարաբերություններ: Այս երկու շուկաների փոխադարձ ազդեցությունը, ի վերջո, ազդում է պետության ողջ տնտեսական գործունեության և հասարակության զարգացման վրա:

Երրորդ՝ «Պետական քաղաքականության դերը Հայաստանում զբաղվածության կարգավորման գործում. համեմատականներ արտերկրում կիրառված մի շարք մոդելների հետ» ենթագլխում ներկայացվել են զբաղվածության պետական կարգավորման հայաստանյան և արտասահմանյան փորձը: Ի տարբերություն զարգացած երկրների, զարգացողների տնտեսական համա կարգերին հատուկ է աշխատանքի շուկայի՝ քանակական և որակական անհավասարակշռությունը: Նման պայմաններում էապես կարևորվում են զբաղվածության պետական կարգավորումը և այդ գործընթացների՝ համակողմանի բարեփոխումների անհրաժեշտությունը: Զբաղվածության ոլորտի՝ նպատակադրված պետական քաղաքականությունն իր ուղղակի ազդեցությունն է ունենում երկրի սոցիալ-տնտեսական զարգացումների և հասարակության բոլոր սոցիալական խմբերի կյանքի որակի բարձրացման վրա:

Ուսանողներին որպես զբաղվածության հիմնահարցի վերլուծության օբյեկտ առանձնացնելը, նախ և առաջ, պայմանավորված է հասարակական հարաբերությունների համակարգում նրանց հատուկ դերով ու կարգավիճակով: Բացի այդ, շատ կարևոր է երիտասարդ մասնագետների՝ աշխատանքային զբաղվածության հարցում պետության դերակատարության ուսումնաիրությունը, որն օրենսդրական և ինստիտուցիոնալ լծակներով ապահովում է հիմնահարցի՝ արդյունավետ լուծումը:

Ներկայացվել են արևմտաեվրոպական երկրների կողմից իրականացվող պետական զբաղվածության քաղաքականության ձևերը, առանձնացվել են աշխատաշուկայի և զբաղվածության՝ պետական կարգավորման տարբեր, ժամանակակից մոդելներ:

Աշխատանքի երկրորդ՝ «Բուհ-աշխատաշուկա համագործակցության հիմնախնդիրները Հայաստանում» գլուխի *առաջին՝ «կրթական ծառայությունների շուկան և բուհական կրթությունն իբրև հանրային բարիք»* ենթագլխում ներկայացվում են կրթության արդիականացման, որպես պետության զարգացման առաջնային հիմք, մարտահրավերները: Այսօր բարձրանում է մտավոր սեփականության և տեղեկատվության սեփականության դերը, որոնք ապրանքներ են, ունեն դրամական արժեք և վաճառվում են

ծառայությունների շուկայում: Այստեղ առաջանում է նոր հակադրություն՝ անտագոնիզմ տեղեկատվության սեփականատերերի և դրա օգտագործողների միջև: Ի հայտ են գալիս տեղեկատվական-տնտեսական դասեր, որոնք և՛ տնտեսական են, և՛ տեղեկատվական: Քաղաքական իշխանությունն այս գործընթացում որոշ չափով վերածվում է մերիտոկրատական կամ արժանիների իշխանության: Հաճախ այն ներկայացված է լինում գիտական ոլորտի աշխատողներով, ովքեր կարողանում են արտահայտել հասարակության՝ գերակշիռ մասի, այլ ոչ թե ինչ-որ խավի կամ շերտի շահերը: Տեղեկատվական-տնտեսական ֆորմացիայի գաղափարախոսությունը պարունակում է համամարդկային արժեքներ, որոնք, փաստացիորեն, թաքցնում են դրա ագրեսիվ էությունը, քանի որ հայտնի իրողություն է, որ համամարդկային արժեքները մերժում են տարբեր էթնիկ հանրույթների հեղափոխական վերակազմակերպման կամ էվոլյուցիայի ճանաչումը որպես սոցիալական զարգացման հիմնական ուղի: Ժամանակակից հասարակության՝ աճող գիտելիքների և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում Հայաստանին անհրաժեշտ են նորը սովորելու ձգտմամբ սերունդներ, որոնք կօգնեն նրան քայլել գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց:

Կրթության հանրային նշանակությունը և սահմանումը որպես հանրային բարիք մեկնաբանվում էր նաև այն գործառույթներով, որոնք վերապահված էին հասարակության կենսաապահովման համակարգին: Ինչպես նշում էր նորվեգիացի հետազոտող Պ. Նիբորգը՝ պետական իշխանությունները պատասխանատու էին բարձրագույն կրթության համար՝ ներառյալ կրթական աստիճանների կառուցվածքը, ինստիտուցիոնալ շրջանակը, որակի հավաստիացման ընթացակարգերը և ամբողջ համակարգի վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրումը: Փաստորեն, ըստ այդ մոտեցման՝ պետական քաղաքականությամբ պետք է երաշխավորվեն ընդհանուր կրթության ոլորտի գործունեության և պաշտպանության հիմնական պայմանները, որպես շուկայական համալիրի մեկ մաս, մինչդեռ մասնագիտական կրթությունը համարվում է ապրանք (ծառայություն), որը գոյանում է երկու շուկաների՝ կրթական ծառայությունների և աշխատաշուկայի խաչմերուկում:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ **«Մասնագիտական կողմնորոշման խնդիրները» ենթագլխում** ներկայացվել են մասնագիտական կողմնորոշման

առանձնահատկությունները մերօրյա երիտասարդների մոտ, հետազոտվել են մասնագիտական սխալ ընտրության հիմքերը:

Շուկայական հարաբերությունները բնութագրվում են արտադրատնտեսական գործընթացների դինամիկությամբ, որից կարող է բխել մասնագիտության և աշխատավայրի՝ անակնկալ փոփոխության հավանականությունը: Նման պայմաններում մասնագետին կարող է բավարար չլինել տեսական գիտելիքներով «մաքուր արհեստավարժությունը», որակավորման բարձր մակարդակը և աշխատանքի որակը:

Ներկայումս որոշակի փոփոխությունների են ենթարկվում մասնագիտական կողմնորոշման գերապատվությունները: Եթե ավանդաբար մասնագիտական կողմնորոշումը լուծում էր մասնագիտական ընտրության հիմնահարցը՝ համադրելով անձի հնարավորությունները և պահանջմունքները, ապա տվյալ դեպքում առաջին պլան են մղվում մասնագիտական ընտրության շարժառիթները:

Անկասկած, մասնագիտական կողմնորոշումը թե՛ պրոցես է, թե՛ արդյունք, երբ վճռորոշ դեր են խաղում մասնագիտական կողմնորոշմամբ զբաղվող պետական ու ոչ պետական կառույցները, դպրոցները, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, բուհերը, ինչպես նաև ծնողներն ու գործատուները: Ընդ որում, հանգամանքը, որ մասնագիտական սխալ կողմնորոշման պատճառները նաև ընտանիքում են, չափազանց կարևոր է, քանի որ շատ դեպքերում ծնողները բացասական ազդեցություն են ունենում երեխաների մասնագիտական կողմորոշման վրա:

Այստեղ հաստատապես պետք է նշել, որ ապագան երիտասարդ, ինտելեկտուալ հասարակությանն է պատկանում: Հայ գիտելիքազեն, ստեղծագործ մտածելակերպով օժտվածները կգրավեն հասարակության բարձր դիրքերը և կկերտեն իրենց ապագան և երկիրը: Առավել ցայտուն կերպով կառանձնանան այն երիտասարդները, որոնք ավելի ճկուն են և կարողանում են հաղթահարել մարտահրավերները: Գաղափարական պայքարը հասարակության մեջ վերածվում է սոցիալական իդեալների հաստատման և խորտակման: Հասարակությունը պետք է շահագրգռված լինի սոցիալական զարգացման և մարդկանց վարքի իդեալական մոդելների ձևավորման մեջ, որոնք բխում են սոցիալական զարգացման, պետության պահպանման և անձնական կայացման շահերից: Եթե սոցիալական իդեալը սխալ է ձևակերպվում, դա կարող է կազմաքանդել հասարակությունը:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Տնտեսապես նպատակահարմար աշխատատեղերի համակարգման հրամայականները» ենթագլխում քննարկվել են արդյունավետ զբաղվածության քաղաքականության, ճիշտ կադրային քաղաքականության՝ ի դեմս մասնագետների ուսուցման, պատրաստման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման ընթացակարգերի արդյունավետ գործարկման մոտեցումները: Քննարկվել և առաջարկվել են «տնտեսապես նպատակահարմար» աշխատատեղերի համակարգման խնդիրների լուծումները:

Զբաղվածության արդյունավետ համակարգի ստեղծումը սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման մեջ որակապես նոր բաղադրիչի ներմուծման հետևանք է, որի արդյունքում հնարավոր է ապահովել աշխատավորների գործունեության համար անհրաժեշտ պատշաճ սոցիալական և տնտեսական պայմաններ: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել զբաղվածության արդյունավետ քաղաքականություն: Դա վերաբերում է նաև ուսանողությանը՝ ի դեմս երիտասարդ մասնագետների, քանի որ գործազրկությունը որպես զբաղվածության ոլորտում առկա կարևորագույն խնդիր, առավել մեծ հարված է հասցնում հենց նրանց՝ որպես հասարակության առավել զգայուն սոցիալական խմբի, առաջացնելով վերջիններիս սոցիալական մարգինալացման վտանգ:

Տնտեսության նպատակահարմարությունը պայմանավորված է գիտահետազոտական ինստիտուտների, ենթակառուցվածքների, մակրոտնտեսական կայունության, առողջապահության, կրթության և մասնագիտական վերապատրաստման, ապրանքաշուկայի և ծառայությունների, աշխատաշուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի առաջընթացի, նորագույն տեխնոլոգիաներով զինվածության, շուկայի չափսերի, աշխատանքի ծավալների և զարգացման մակարդակի, ինչպես նաև նորարարական մի շարք այլ գործոններով:

Զբաղվածության տնտեսական և սոցիալական կատեգորիաները հնարավոր է լիովին հաշվի առնել պետություն-աշխատաշուկա-հասարակություն կառուցողական համագործակցության գործարկման դեպքում:

Աշխատավորներին տնտեսապես նպատակահարմար աշխատատեղերով ապահովումը և արդյունավետ զբաղվածության ապահովումը կազմում են պետության տնտեսական քաղաքականության անքակտելի մասը: «Տնտեսապես նպատակահարմար աշխատատեղ» ասելով առաջին հերթին հասկացվում է այն աշխատատեղը, որն

աշխատողին թույլ է տալիս ապահովել աշխատանքի արտադրողականության անհրաժեշտ մակարդակ, ունենալ համապատասխան աշխատավարձ և գոյատևման համար անհրաժեշտ եկամտաբերություն: Տվյալ դեպքում «տնտեսական նպատակահարմարություն» հասկացությունը դիտարկվում է աշխատողի տեսանկյունից:

Պետության տեսանկյունից «տնտեսական նպատակահարմարությունը» նշանակում է իր իսկ կողմից ստեղծված աշխատատեղի համալրումն արհեստավարժ մասնագետով: Այսինքն, այս դեպքում առաջնորդվում են «յուրաքանչյուր աշխատող իր տեղում» սկզբունքով: Այս խնդրի լուծմանը հասնելը բավականին բարդ էր հատկապես խորհրդային գաղափարախոսության փլուզման ժամանակահատվածում, երբ գործարկվող ձեռնարկությունների մեծ մասը, փորձելով ինչ-որ կերպ գոյատևել քայքայվող տնտեսության ներսում, նվազագույնի էին հասցնում իրենց ծախսերը՝ երբեմն նաև ազատվելով հույժ անհրաժեշտ աշխատուժից: Այդ ամենը, իր հերթին, պարարտ հող նախապատրաստեց թաքնված զբաղվածության ի հայտ գալու և, որպես հետևանք, ստվերային աշխատաշուկայի, իսկ հետագայում նաև՝ տնտեսության ձևավորման համար:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրած է ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության խնդիրները (Գավառի պետական համալսարանի դեպքի ուսումնասիրություն) և ներառում է երեք ենթագլուխ:

Այստեղ ներկայացված են ԳՊՀ ուսանողության զբաղվածության խնդիրների վերհանմանն ուղղված սոցիոլոգիակական հետազոտության ծրագիրը, ստացված արդյունքների վերլուծությունները:

Աշխատության այս գլուխը նվիրված է Գավառի պետական համալսարանի ուսանող-մասնագետների՝ աշխատաշուկայում ինտեգրման ժամանակակից, արդյունավետ գործող մոդելի ստեղծմանը, որը, անշուշտ, չի արտահայտելու միայն տեղական կարիքները: Ավելին, տվյալ բուհի օրինակով քննարկվել են այն հարցերը, որոնք օրգանական կապով կապված են նաև հանրապետական նշանակության երևույթների հետ: Մարզային կրթական այս հաստատության ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նախ, հարկ է նշել, որ մայրաքաղաք Երևանում սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, ինչպես նաև մշակութային կյանքի գերկենտրոնացումը կարծես լուսանցքում է թողել մարզերի բնակչության՝ այդ թվում երիտասարդների խնդիրները:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համակցմամբ: Որպես տեղեկատվության հավաքման աղբյուր ընտրվել են փաստաթղթերի վերլուծության, խորին հարցազրույցների և հարցաթերթիկային հարցման մեթոդները:

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների, ինչպես նաև գործատուների հետ անցկացված հարցումների վերլուծության շնորհիվ կարողացել ենք ստեղծել և ներկայացնել բուհ–աշխատաշուկա գործառնության կապերի և արդյունավետության ընդհանուր պատկեր, որը ներկայացրել ենք աշխատանքի վերջնարդյունքում: Այս եռակողմ, դերակատար կողմերի կարծիքները և ստացված տվյալները ենթարկվել են համակցված վերլուծության, որի արդյունքում առանձնացվել են հրամայականներն ու բացթողումները, որոնք խոչընդոտում էին այդ եռամիասնության ակտիվ գործունեությանը:

Մարզային բուհ-երի շարքից, որպես ուսումնասիրության արժանի դեպք նպատակային կերպով ընտրվել է ԳՊՀ-ը, քանի որ այն ամենամեծն է մարզային բուհերից և տեղակայված է ՀՀ տարածքային առումով ամենամեծ մարզում: Տվյալ դեպքի ուսումնասիրության ընթացքում իրականացված քանակական հարցազրույցների արդյունքների գերակշիռ մասը, համադրվելով այլ ուսումնասիրությունների և փաստաթղթերի վերլուծությունների արդյունքներով, կիրառելի են նաև հանրապետության ողջ բուհական ցանցի համար: Չնայած նրան, որ աշխատանքը եղել է լոկալ բնույթի, արդյունքներն ունեն համընդհանուր՝ տեսական ու կիրառական նշանակություն: Ավելին, տեղական ինչ-ինչ առանձնահատկություններ, ինչպես օրինակ բնակչության ավանդական մտածելակերպի ու ապրելակերպի որոշ գծերն են, կարելի է հաշվի առնել որոշ մասնավոր խնդիրների ձևակերպման ու լուծման ժամանակ: **Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են քանակական և որակական հետազոտությունների վերլուծական արդյունքները:**

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ներկայացված են մեր կողմից առաջարկվող զբաղվածության և աշխատանքի տեղավորման նոր մոդելի նկարագրությունը և արդյունավետ կիրառության հնարավորությունները: Այս մոդելի ստեղծման հիմքում ընկած են դասական մոտեցումների, արտասահմանյան բուհերի առաջատար փորձի, զարգացող երկրներում ներդրվող համակարգերի, արդիականացման

մարտահրավերների հետազոտությունները: Արտասահմանյան բուհերի փորձի ուսումնասիրության և ներկայացման արդյունքում՝ հարկ է առանձնացնել, որ մեր կողմից առաջարկվող նոր մոդելի արդյունավետ գործառնման համար առաջնահերթություն ենք համարում ապագա ուսանողներին ներկայացնել մասնագիտությունների նորացվող ցանկի և առավելությունների մարտահրավերների վերաբերյալ: Բացի մասնագիտական ուղղության սխալ ընտրությունից, այսօր ապագա ուսանողները բախվում են նաև ընտրած մասնագիտություններով, առհասարակ, աշխատանք չգտնելու խնդրին: Այդ պատճառով, առաջարկում ենք պետական մակարդակով վերափոխել ՀՀ կրթական պլանները և վերանայել մասնագիտությունների ցանկը և այս ամենը ներառել մասնագիտական կողմնորոշման գործընթացներում: Անհրաժեշտ է հետևել կրթական նորարարական մոտեցումներին և զարգացած երկրների արդյունավետ փորձը տեղայնացնել ՀՀ–ում:

Աշխատանքում հետազոտվել են արտասահմանյան բուհերի կրթական համակարգերը և փորձ է արվել համեմատական վերլուծություն անել: Այստեղ մեր կողմից առաջարկվում է, կրթական համակարգում նվազագույնի հասցնել տեսական դասընթացները՝ համակարգելով և բաշխելով դրանք ուսանողների ինքնուրույնության և արձակուրդային հանձնարարությունների միջև: Փոխարենը ավելացնել գործնական դասերը և պրակտիկաները գործատուների մոտ, ինչպես նաև նվազեցնել ուսուցման տևողությունը: Առաջարկում ենք, որ ուսումնառության երրորդ և չորրորդ տարում ուսանողները բացառապես զբաղվեն պրակտիկ, մասնագիտական գործունեությամբ: Ըստ մեր կողմից առաջարկվող մոդելի, ուսանողներին անհրաժեշտ է օգնել մասնագիատական աշխատանք գտնելու գործընթացում արդեն երկրորդ–երրորդ կուրսից: Սակայն, գործատուների կողմից կարելի նշել որպես արդարացի պահանջ մասնագիտական փորձի վերաբերյալ: Այս հարցում առաջարկում ենք պետական միջամտությունը համակարգը վերակազմավորելու և մեխանիզմի գործարկման հարցում: Ի տարբերություն այլ մոդելների, մեր կողմից առաջարկվող մոդելը բավականին համընդգրկուն է և համապետական: Կարելի է պնդել, որ ճիշտ համակարգման դեպքում կարող ենք ստեղծել տնտեսապես նպատակահարմար աշխատակիցների բազա և նպաստել միգրացիայի նվազեցմանը:

Ցանցային հասարակության զարգացմանը զուգընթաց մեր կողմից առաջարկվող մոդելի յուրաքանչյուր կողմ պետք է գործառնի հանուն ընդհանուր նպատակի: Մեր կողմից

առաջարկվում է ստեղծել մի համակարգ–մոդել , որը իհարկե, կլինի կլաստերի տեսքով, ընդհանուր մեկ հարթակում ներառված կլինեն բոլոր տվյալների բազաները՝ թե գործատուների, թե բուհերի, և թե ուսանողների: Այդ ամբողջական համակարգը կարելի է անվանել սոցիալական գործընկերություն, որի շուրջ կհամախմբվեն ստորև ներկայացված կառույցները: Մեկ ընդհանուր հարթակում համախմբված բոլոր կառույցները պետք է գործառնեն համաձայնեցված՝ ի շահ կրթական համակարգի կատարելագործման, աշխատատեղերի ստեղծման, ուսանողների մասնագիտական ինքնորոշման, գործատուների մոտ աշխատանքային փորձի անցկացման կազմակերպման, արտալսարանային գործնական դասերի կազմակերպման և բուհական համակարգի կատրելագործման:

Ատենախոսության եզրակացության մեջ ներկայացված են կատարված տեսական վերլուծությունների, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները և վերջնարդյունքում առաջարկվող մոդելի նկարագրությունը:

Աշխատանքում մի կողմից ի մի են բերվել աշխատաշուկայում առկա խնդիրներին նվիրված հետազոտությունների տվյալները, իսկ մյուս կողմից դրանք համալրվել և ամբողջացվել են ուսանողների զբաղվածության՝ խորքային ուսումնասիրությամբ:

Աշխատանքում ներկայացվել են ուսանողության զբաղվածության հետ կապված խնդիրները, բուհ-ուսանող-գործատու հարաբերություններում առկա թերությունները, խոչընդոտները և դրանց վերացման հնարավորություններն ու հեռանկարները. քննարկվել է ուսանողության՝ զբաղվածության հարցում պետության դերակատարությունն ու դրա կարևորությունը: Դիտարկվել են ուսանողների կրթական գործընթացի՝ արդյունավետ կազմակերպման, մասնագիտական կողմնորոշման, ինչպես նաև բուհ-աշխատաշուկա համագործակցության և այդ կապի պատասխանատու կառույցների գործունեության առանձնահատկությունները: Ներկայացվել են կրթության ոլորտի այն կողմերը, որոնք ազդում են ապագայում որակավորված մասնագետներ ունենալու, ինչպես նաև ուսանողների՝ աշխատանք գտնելու գործընթացի վրա:

Նշանակալի ուշադրություն է դարձվել «զբաղվածություն» հասկացությանը. մասնավորապես, զբաղվածության հիմնահարցը դիտարկվել է որպես ՀՀ սոցիալական գերխնդիր: Նկարագրվել են դրա տնտեսական ու սոցիալական ասպեկտները,

զբաղվածության քաղաքականության մշակման և իրականացման գործում պետության դերակատարությունը, ինչպես նաև ուսանողների ընկալումներն ու գնահատականները: Այս դեպքում ուսանողությունը դիտարկվել է որպես զբաղվածության ոլորտում առկա հիմնախնդիրների հիմնական հասցեատեր:

Իրականացվել է «տնտեսական նպատակահարմարություն» հասկացության ճշգրտում: Վերլուծվել են պետությանն անհրաժեշտ աշխատողներին տնտեսապես նպատակահարմար աշխատատեղերով ապահովելու հնարավորությունները, ինչպես նաև արդյունավետ և օգտակար զբաղվածության վերաբերյալ մոտեցումները: Աշխատանքում ներկայացվել են նաև մասնագիտական կողմնորոշմանն առնչվող հարցեր՝ անդրարարձ կատարելով առկա հետազոտություններին և ամբողջացնելով մեր կողմից կատարված ուսումնասիրություններով :

Նշենք նաև, որ աշխատաշուկայի պահանջարկի և կրթական համակարգի միջև կապի հետազոտության արդյունքների վերլուծությունն իրականացվել է տվյալների մշակման՝ համակցված մեթոդով: Ստորև ներկայացնում ենք այն հիմնական եզրակացությունները, որոնց հանգել ենք ուսումնասիրության արդյունքում: Կատարել ենք նաև որոշ առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել ինչպես բուհերի, գործատու անհատների և կազմակերպությունների, այնպես էլ պետական մարմինների կողմից ռազմավարական նոր ծրագրեր մշակելու ժամանակ:

- Պետություն-կրթական համակարգ-աշխատաշուկա շրջապտույտի արդյու-նավետ գործառնումն ուղիղ համեմատական է և ազդում է ուսանողների զբաղվածության հիմնախնդրի կարգավորման ու կառավարման վրա: Առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունն արտացոլում է պետության, աշխատանքի և կրթական ինստիտուտների կողմից արտադրական գործընթացի նկատմամբ պահանջարկի թերի պլանավորումը կամ դրա բացակայությունը:

ԳՊՀ-ում անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ուսանողների մեծամասնությունը մասնագիտության ընտրության հարցում նկատի չէին ունեցել օբյեկտիվ գործոնները և սխալվել էին: Իհարկե, այստեղ կարելի է եզրակացնել, որ շատ ուսանողներ խնդիրների առջև կկանգնեն մասնագիտական աշխատանք փնտրելիս:

Հետազոտության տվյալների վերլուծության և համադրման արդյունքում հաստատվեց այն իրողությունը, որ մասնագիտական ընտրության հարցում ուսանողների գերակշիռ մասը առաջնորդվել էր ծնողների ցանկություններով, հանրության շրջանում սոցիալական բարձր դիրք գրավելու ձգտումով, մասնագիտական գրավչությամբ և այլն: Սեփական հնարավորությունները, հմտություններն ու կարողությունները ավելի քիչ էին կարևորվել ապագա մասնագիտությունն ընտրելիս:

Խիստ կարևորվել է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման ժամանակ կրթություն-աշխատաշուկա փոխադարձ կապի սերտացման անհրաժեշտությունը: Ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում աշխատաշուկայի պահանջները՝ հնարավորինս ամբողջական կերպով արտացոլելուն խոչընդոտում են գործատուների պասիվ ներգրավվածությունն ուսումնական պրոցեսներում, աշխատաշուկայի պահանջների մասին անբավարար տեղեկատվությունը և աշխատաշուկայի՝ արագ փոփոխվող պահանջները:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ անհրաժեշտ է պատրաստել անհրաժեշտ թվաքանակով, մասնագիտական գիտելիքների համարժեք պաշարով և կարողությունների պատշաճ մակարդակով մասնագետներ, որոնք ճկուն կգտնեն իրենց տեղը աշխատաշուկայում:

Նշենք, որ ինչպես ցույց են տալիս մի շարք հետազոտություններ, ուսանողների զբաղվածության խնդիրների շարքում աշխատանքային փորձի բացակայությունը չափազանց մեծ խոչընդոտ է: Ուստի, այս հարցի կարգավորման մեջ կարևոր է ոչ միայն պրակտիկայի վայրի ղեկավարության, այլև աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության նպատակաուղղված մասնակցությունը:

Առաջարկում ենք կրթական ծրագրերը մշակելիս ուշադրության կենտրոնում պահել մասնագիտությունների նորացվող ցանկը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց փոփոխության են ենթարկվում մասնագիտությունների ձևավորման պահանջները և որոշ մասնագիտություններ, ուղղակիորեն, դուրս են մնում աշխատաշուկայում մրցակցությունից:

Առաջարկում ենք ստեղծել նոր, համակարգված, մոդել ուսանողների աշխատանքի և զբաղվածության ապահովման համար: Ներկայացվող ուղղությունները կերաշխավորեն ՀՀ աշխատաշուկայի և կրթական համակարգի սոցիալական ու աշխատանքային կայուն

փոխգործակցությունը: Այս մոդել–համակարգը կարելի է անվանել սոցիալական գործընկերություն–ցանցային մոդել: Մեր կողմից ներկայացվող մոդելի առավելությունը այն է, որ ընդհանուր հարթակում համախմբված բոլոր կառույցները պետք է գործառնեն համաձայնեցված՝ ի շահ կրթական համակարգի կատարելագործման, աշխատատեղերի ստեղծման, ուսանողների մասնագիտական ինքնորոշման, գործատուների մոտ աշխատանքային փորձի անցկացման կազմակերպման, արտալսարանային գրոծնական դասերի կազմակերպման և բուհական համակարգի կատրելագործման: Այս հարթակում անհրաժեշտ է ներառել բոլորին (բուհեր,աշխատաշուկա, մասնագիտական նորություններ և գործատուների, դասախոսների հանրապետական բազաներ): Առաջարկում ենք բուհում գործող կարիերիայի կենտրոնների համախբում տվյալ համակարգում: Անկասկած այս կառույցները կհանդիսանան կապող օղակներ: Այստեղ անհարժեշտ է ներառել բոլոր դասախոսներին և ուսանողներին: Հանրապետական ուսանողա–դասախոսական ցանցի ստեղծման արդյունքում կարող ենք ստեղծել գիտական ցանցային միջավայր, տեղեկանալ և տեղեկացնել արդիական, գիտական նորարարություններին, ծանոթանալ արձանագրված մասնագիտական հաջողություններին և առաջընթացի ռազմավարական մոտեցումներին: Առաջարկվող սոցիալական գործընկերության արդյունքում կարելի է վերացնել բուհ–բուհ, բուհ–գործատու–ուսանող–դասախոս–զբաղվածության պետական համակարգ անջրպետը: Ընդհանրացնենք, որ ստեղծված մոդելի հիմքում ընկած են ցանցային հասարակության վերաբերյալ տեսությունները, ինչպսիք են՝ Մ. Կաստելսի, Դ.Բելի, Է. Վալերսթայնի դասական մոտեցումները, որոնք առավել քան արդիական են:

Մասնագիտական կողմնորոշումը պետք է լինի գիտակցված, հիմնավորված և նպատակահարմար, իսկ մասնագիտության ընտրությունը՝ պայմանավորված անհատական նկարագրով ու որակներով, նախասիրություններով ու աշխատաշուկայի պահանջարկով:Կատարված հետազոտությունների հիման վրա առաջարկել ենք ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության աստիճանի բարձրացման նոր միջոցառումների իրականացման նախագիծ: Առաջարկել ենք ուսանողների փորձառության միջազգային պրակտիկայի ներդրումն ու կիրառումը՝ դրան միտված ծրագրերի իրագործումը: Ուսանողների մասնագիտական կոմպետենտության բովանդակությունը կազմող

կարևորագույն բաղադրատարրերը կարող են ձևավորվել և զարգանալ միայն աշխատանքային գործունեության ընթացքում:

Այսօր, տեխնոլոգիական նորարարությունների առաջացման արդյունքում, առաջանում է աշխատուժի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի անհամապատասխանություն: Ժամանակակից կրթական համակարգը պետք է համապատասխանեցնել տեխնոլոգիական առաջընթացի պահանջներին, կրթել համապատասխան մասնագետներ, որոնց գիտելիքների բազայի շնորհիվ հնարավոր կլինի երկրում արձանագրել տնտեսական առաջընթաց:

Անհրաժեշտ է լուծել աշխատաշուկայի և կրթական հաստատությունների փոխադարձ կապն ապահովող կառուցակարգերի բացակայության հարցերը և օգնել բուհերին, որպեսզի համակարգված կերպով կարողանան աշխատանքով ապահովել իրենց շրջանավարտներին: Իհարկե, հաստատապես փաստենք, ցանցային–համակարգված մոդելի ստեղծման անհրաժեշտությունը:

Անոտացիա

Ատենախոսության տեսական և գործնական հետազոտությունների արդյունքում բարձրաձայնվել են մասնագիտական կողմնորոշման, տնտեսապես նպատակահարմար աշխատատեղերի ապահովման, սրընթաց զարգացող տեղեկատվական մարտահրավերների՝ կրթության ոլորտում ազդեցությունների, աշխատաշուկայի արդիականացման խնդիրները: Բազմակողմանիորեն հետազոտվել են ուսանողների զբաղվածության խնդիրները: Արձանագրված խնդիրների կանխարգելման և առկա համակարգի կատարելագործման համար առաջարկում ենք ստեղծել նոր, համակարգված, ցանցային մոդել ուսանողների աշխատանքի և զբաղվածության ապահովման համար: Ներկայացվող ուղղությունները կերաշխավորեն ՀՀ աշխատաշուկայի և կրթական համակարգի սոցիալական ու աշխատանքային կայուն փոխգործակցությունը: Այս մոդել–համակարգը կարելի է անվանել սոցիալական գործընկերություն–ցանցային մոդել, որի շուրջ կհամախմբվեն բոլոր կառույցները, որոնք կարող են լուծել ուսանողների զվաղվածության և աշխատանքի տեղավորման խնդիրները: Մեր կողմից ներկայացվող մոդելի առավելությունը այն է, որ ընդհանուր հարթակում համախմբված բոլոր կառույցները

պետք է գործառնեն համաձայնեցված՝ ի շահ կրթական համակարգի կատարելագործման, աշխատատեղերի ստեղծման, ուսանողների մասնագիտական ինքնորոշման, գործատուների մոտ աշխատանքային փորձի անցկացման կազմակերպման, և բուհական համակարգի կատրելագործման: Այս հարթակում անհրաժեշտ է ներառել բոլոր տվյալները (բուհեր,աշխատաշուկա, մասնագիտական նորություններ և գործատուների, դասախոսների հանրապետական բազաներ): Հանրապետական ուսանողա–դասախոսական ցանցի ստեղծման արդյունքում կարող ենք ստեղծել գիտական ցանցային միջավայր, տեղեկանալ և տեղեկացնել արդիական, գիտական նորարարություններին, ծանոթանալ արձանագրված մասնագիտական հաջողություններին և առաջընթացի ռազմավարական մոտեցումներին: Առաջարկվող սոցիալական գործընկերության արդյունքում կարելի է վերացնել բուհ–բուհ, բուհ–գործատու–ուսանող–դասախոս–զբաղվածության պետական համակարգ անջրպետը և իհարկե ստեղծել համակարգ, որտեղ բոլոր շահագրգիռ կողմերը կլինեն դերակատար, տեղեկացված և ներառված:

ЕГИАЗАРЯН СЮЗАННА ЖЮЛЬВЕРНОВНА

ПРОБЛЕМЫ ТРУДОУСТРОЙСТВА СТУДЕНТОВ В РЕГИОНАХ РА

РЕЗЮМЕ

В результате теоретического и практического исследования диссертации были подняты вопросы профессиональной ориентации, обеспечения экономически целесообразных рабочих мест, быстро развивающихся информационных технологий в сфере образования, модернизации рынка труда. Проблемы трудоустройства студентов подверглись многостороннему исследованию. В целях предотвращения зафиксированных проблем и совершенствования существующей системы мы предлагаем создать новую, системную, сетевую модель обеспечения работы и трудоустройства студентов. Представленные направления будут гарантировать стабильное социально-трудовое взаимодействие рынка труда и системы образования РА. Данную модель-систему можно назвать моделью социального партнерства-сети, вокруг которой будут объединены все структуры,

способные решить проблемы студенческой занятости и трудоустройства. Преимущество представленной нами модели состоит в том, что все структуры, объединенные на общей платформе, должны действовать скоординировано во благо совершенствования системы образования, создания рабочих мест, профессионального самоопределения студентов, организации опыта работы с работодателями, улучшения университетской системы. В эту платформу необходимо включить всех (вузы, рынок труда, профессиональные новости и республиканские базы работодателей, профессоров). В результате создания республиканской студенческо-преподавательской сети мы сможем создать научную сетевую среду, узнавать и информировать о современных научных инновациях, знакомиться с зафиксированными профессиональными успехами и стратегическими подходами к прогрессу. В результате предлагаемого социального партнерства можно ликвидировать разрыв государственной системы, вуз -вуз, университет-работодатель-студент-преподаватель-занятость и, конечно же, создать систему, в которой все заинтересованные стороны будут акторами, информированными и включенными.

SYUZANNA YEGHIAZARYAN ZHULVERN

THE EMPLOYMENT PROBLEMS OF STUDENTS IN RA REGIONS

SUMMARY

As a result of the theoretical and practical research of the dissertation, the questions of professional orientation, provision of economically viable workplaces, rapidly developing information technologies in the field of education, modernization of the labor market were raised. Students' employment problems were investigated in different ways. In order to prevent fixed problems and improve the existing system, we propose to create a new, system-network model of providing work and employment for students. The presented directions will guarantee a stable social and labor interaction of the labor market and the RA education system. This model-system can be called a model of a social partnership-network, around which all structures capable of solving the problems of student employment will be united. The advantage of the presented model is that all structures united on a common platform should act in a coordinated way of improving the education system, creating jobs, professional self-determination of

students, organizing work experience with employers, improving the university system. In this platform it is necessary to include all members (universities, labor market, professional news and republican databases of employers, professors). As a result of the creation of the republican student-lecturer network, we will be able to create a scientific online environment, learn and inform about modern scientific innovations, get acquainted with recorded professional successes and strategic approaches of progress. As a result of the proposed social partnership, it is possible to eliminate the gap in the state system, university-university, university-employer-student-lecturer-employment and, finally, create a system in which all interested parts will be actors, informed and included.

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Եղիազարյան Ս., Մասնագիտական կողմնորոշումը որպես ուսանողների մասնագիտական ինքնորոշման հիմք, Փիլիսոփայությունը արդի աշխարհում. ՅՈՒՆԵՍԿՕ-ի փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր. Գիրք VI, Երևան 2016 թ էջ 178-183.
2. Եղիազարյան Ս. Ուսանողության մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրները շուկայական արդի հարաբերությունների պայմաններում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսորցիումի հանդես(1) ,Երևան 2016 էջ 51
3. Եղիազարյան Ս., ՀՀ ուսանողների զբաղվածության և աշխատանքի ապահովման նոր մոդել, Լրաբեր հասարակական գիտությունների 2023.1 (667), էջ 99-107,
4. Եղիազարյան Ս., Կրթական գործընթացի կազմակերպման խոչընդոտները տեխնոլոգիական արդի մարտահրավերների տեսանկյունից, Կանթեղ, 2016, էջ 131-138.,
5. Եղիազարյան Ս., Ուսանողության զբաղվածության աստիճանի բարձրացման միջազգային փորձի ներդրման հնարավորությունները ՀՀ-ում, Պատմություն և քաղաքականություն, Գիտական հանդես, թիվ 6(11), Երևան, 2020, էջ 104-116.,

6. Եղիազարյան Ս., Ուսանողների մասնագիտական կոմպետենտության ձևավորման ու զարգացման հիմքերը, Պատմություն և քաղաքականություն, 1(16), Երևան, 2020, էջ 153-160:
7. Եղիազարյան Ս. Ուսանողության մասնագիական կողմնորոշման հիմնախնդիրները շուկայական արդի հարաբերությունների պայմաններում>>.Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ. Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես <Զանգակ -97> ՀՀ, 0051, Երևան 2016թ
8. Եղիազարյան Ս., Ժամանակակից հայ ուսանողության աշխատանքի ապահովվածության հիմնախնդիրները, Լրաբեր հասարակական գիտությունների 1(646) հունվար –ապրիլ, Երևան 2016թ.էջ208
9. Егиазарян С., Профессиональное консультирование: вчера, сегодня, завтра. Армяно-Русская международная конференция, “Тенденции развития практической социологии и психологии, Ереван, Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, с. 43-45/19-21 апреля 2017г., г.Ереван/ отв.ред. Ц.В.Бойко, А.К.Саакян, В.А.Шабалов, Г.С.Мкоян. –СПб: Изд-во СПбУТУиЭ, 2018, стр 53.
10. Егиазарян С., Экономические и социальные аспекты занятости студентов, Теоретические предпосылки и прикладные возможности социологии, Материалы армяно-русской международной научная конференции (26-28 апреля 2016 г., г. Ереван), отв. ред. Саакян А.К., Бойко С.В., Шабалов В.А. Ереван: Ереванский государственный университет, 2016. 52-56 с.
11. Bystriantsev S., Bagandova E., Yeghiazaryan S., Bystriantsev P, Pleshkov E, Saakyan I., The traits of social ideal in russian philosophy of the XIX century, Wisdom 1(17) Yerevan 2021
12. Yeghiazaryan S., Characteristics of Professional Orientation and Career Process Management in RA in the Context of the New Form of University-Labor Market Cooperation. Alternative Quarterly Academic Journal Economy & Management January - March, 2024.Yerevan pp. 19-26
13. Yeghiazaryan S., Saakyan A., Avakova E., Bagandova E., Bakhshyan G., Analysis for Generations for the Youth Research Methodology, Wisdom, Yerevan 2019 (2)13, pp. 121-134.